ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **24-ը հոկտեմբերի 2025թ.**

ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Մ. Հովհաննիսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Հ. Գևորգյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար**
Վ. Հարությունյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Ն. Ավանեսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**
Ս. Սարգսյան	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մանկապարտեզների համար գույքի ձեռքբերման գործընթացի վերաբերյալ:
2. Մարզի համայնքների 2025թ. 9 ամիսների սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
3. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
4. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
5. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
6. 2025թ. մարզում կատարված գյուղատնտեսական աշխատանքների ամփոփում:
7. Այլ հարցեր:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը՝ մարզպետ Սերգեյ Մովսիսյանը ներկայացրեց արդարադատության 1-ին դասի խորհրդական, ՀՀ Արագածոտնի մարզի նորանշանակ դատախազ Նիկոլայ Բարսեղյանին՝ մաղթելով նրան արդյունավետ աշխատանքային գործունեություն:

Լսեցին՝

***1.* Մանկապարտեզների համար գույքի ձեռքբերման գործընթացի վերաբերյալ** */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյան/:*

Մ. Հովհաննիսյանը զեկուցեց, որ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող, մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 500 մանկապարտեզների ծրագրում ընդգրկված, շինարարական աշխատանքներն ավարտված կամ 2024 թվականի ավարտը նախատեսվող մանկապարտեզների համար անհրաժեշտ գույքի գնման մրցույթներն ամբողջությամբ կատարվել են: Նշեց, որ յուրաքանչյուր մանկապարտեզի համար մրցույթի է դրվել մոտ 168 անուն գույք:

Նշվեց, որ շուտով պատրաստ կլինեն նաև մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 500 մանկապարտեզների ծրագրում ընդգրկված 5 վերանորոգվող մանկապարտեզների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, որից հետո դրանք կներկայացվեն մրցույթի:

Քննարկվեց մանկապարտեզների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթերի, թերությունների ակտերի, նախահաշվային փաստաթղթերի մշակման, վերանորոգման աշխատանքների վերահսկման ծառայությունների, ինչպես նաև գույքի տրամադրման հետ առնչվող հարցեր: Առկա խնդիրների լուծման համար առաջարկվեցին հստակ միջոցներ ու ժամկետներ:

Մ. Հովհաննիսյանը առաջարկեց համայնքի ղեկավարներին մինչև շինարարական և առկա գույքային խնդիրների լուծման ավարտը կազմակերպել նաև մանկապարտեզների տնօրենների մրցույթների և աշխատակազմի համալրման աշխատանքները:

***2.* Մարզի համայնքների 2025թ. 9 ամիսների սեփական եկամուտների կատարման վերաբերյալ** */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան / :*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը ներկայացրեց տեղեկատվություն 9 ամիսների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ հավաքագրումն ընդհանուր կազմել է 66,2%. Աշտարակ՝ 66,8%, Շամիրամ՝ 67,9%, Ապարան՝ 67,8%, Ալագյազ՝ 78,3%, Մեծաձոր՝ 95,4%, Արևուտ՝ 94,6%, Թալին՝ 65,7%, Ծաղկահովիտ՝ 52,1%: Նշվեց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ հավաքագրման աճ կա:

ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանն էլ հավելեց, որ Ծաղկահովիտ համայնքը, որը նախորդ ժամանակահատվածում սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշն ուներ, համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծել է աշխատանքային խումբ հավաքագրման ցուցանիշները բարելավելու նպատակով:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանին համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակել պլանավորած ցուցանիշների հավաքագրման գործընթացի վերահսկողությունը:

3. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ մշտադիտարկման նպատակով հանձնաժողովի անդամների կողմից 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել է 100 այց: Մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները կատարված աշխատանքների որակի ապահովման և կատարված աշխատանքների նախագծային համապատասխանությանն են վերաբերվել: Բոլոր արձանագրված խնդիրների վերաբերյալ համայնքների գործընկերներն իրազեկվել են և պարտավորվել սեղմ ժամկետում շտկել արձանագրված խնդիրները:

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից եղան հարցադրումներ մարզի տարբեր համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ, տրվեցին հստակ հանձնարարականներ ոլորտային պատասխանատուներին՝ ապահովելու ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերի և մարզպետի աշխատակազմի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը:

4. **Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն** */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության վարչության պետ Հ. Ստեփանյան /:*

/Զեկույցը կցվում է/:

2022 թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրերից ավարտվել են 17-ը: Ներկայացվեց տեղեկատվություն ընթացքի մեջ գտնվող ծրագրերի վերաբերյալ՝ Աշտարակ քաղաքի թիվ 4 <<Հասմիկ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների ծրագրի և Ապարան համայնքի Արագած և Շենավան բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցում ծրագրի վերաբերյալ: Նշվեց, որ կատարվել է ծրագրով նախատեսված աշխատանքների շուրջ 90%-ը:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր, որոնցից ընթացքի մեջ են Աշտարակ համայնքի Բյուրական, Կարբի և Ոսկեհատ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման, կառուցման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացումը:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 16 ծրագիր: Ներկայացվեց տեղեկատվություն ծրագրերի բաշխվածության և ոլորտների մասին: Ամբողջությամբ

ավարտվել է վեց ծրագիր, իսկ Ապարան համայնքից ներկայացված ասֆալտապատման սուբվենցիոն ծրագրից ավարտվել է գյուղական բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատման ենթածրագիրը: 2024թ. սուբվենցիոն ծրագրերից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորում է ստացել 8 ծրագիր և 2 ենթածրագիր: Ընթացքի մեջ գտնվող ծրագրերը տասն են:

2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանն է ներկայացվել 19 սուբվենցիոն ծրագրերի փաթեթ: Ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 10 ծրագիր և 2 ծրագիր դրական պայմանով: Երկու ծրագիր ավարտված է, մնացած ծրագրերն ընթացքի մեջ են կամ գտնվում են պայմանագրի կնքման փուլում:

5. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Սրբեփանյան /:*
/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվում են ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազաֆիկացման և Մեծաձոր համայնքի Օթևան բնակավայրի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Համաձայն ՀՀ կառավարության 21.11.2024թ. N1836-Ն որոշման՝ ՀՀ պետական բյուջեից Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նպատակով հատկացվել էր պայմանագրով նախատեսված արժեքի 25%-ը, իսկ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների համար՝ նախատեսված արժեքի 20%-ը: Երկու ծրագրերի մասով ՀՀ կառավարության հատկացված գումարների շրջանակներում աշխատանքները ամբողջությամբ իրականացվել են: Նշվեց, որ գրությամբ միջնորդություն է ուղարկվել ՀՀ ՏԿԵ նախարարություն Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքների և Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով մնացորդային գումարների հատկացման համար: Համաձայն ՀՀ կառավարության 13.03.2025թ. N299-Ն որոշման՝ Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նպատակով հատկացվել է պայմանագրերով նախատեսված մնացորդային գումարը: Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները ավարտված են: Ընթանում են ավարտական ակտի կազմման աշխատանքներ:

Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ տեղի ունեցած բացթողումների արդյունքում համայնքի մի քանի փողոցներ դուրս էին մնացել նախագծից: Համայնքի գազաֆիկացման հարցը վերջնակետին հասցնելու նպատակով մարզպետի աշխատակազմի կողմից պատվիրվել էր լրացուցիչ աշխատանքների իրականացման նախագիծ: Մարզպետի աշխատակազմը դիմել է ՏԿԵ նախարարություն ՀՀ կառավարությանը միջնորդելու խնդրանքով՝ լրացուցիչ աշխատանքների իրականացման նպատակով գումար հատկացնելու համար: ՀՀ կառավարության որոշման նախագիծը շրջանառվում է և շուտով համապատասխան գումարի հատկացումը կլինի: Գազատարի ընդհանուր երկարությունը կազմում է 17 203 մետր, որից ավելացվածը մասը կազմում է 1351 մետր:

Այս պահի դրությամբ աշխատանքները ավարտված են: Ընթանում են ավարտական ակտի կազմման աշխատանքներ:

2025թ-ին իրականացվել է 52.8 կմ մարզային ավտոճանապարհների կահավորանքի և գծանշման նախագծերի, ինչպես նաև նախագծերի փորձաքննության մրցույթներ: Ընթացիկ տարվան համապատասխան գումարների բաշխման արդյունքում իրականացվել է նաև 228.1կմ մարզային նշանակության ավտոճանապարհների նախագծերի, ինչպես նաև նախագծերի փորձաքննության մրցույթներ:

ՀՀ Արագածոտնի մարզի 5 մանկապարտեզների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու նպատակով մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարվել է մրցույթ: Իրականացվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ: Մանկապարտեզների վերանորոգման աշխատանքները իրականացվելու են հրատապ ծրագրի շրջանակներում: /Աշտարակի թիվ 1 «Մանուշակ» մանկապարտեզ ՀՈԱԿ, «Աշտարակի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Քուչակի մանկապարտեզ» ՀՈԱԿ, Ապարանի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ և «Հարթավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ/:

Պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մարզպետի աշխատակազմի վարչական շենքի գազամատակարարման գծի կառուցման, ջեռուցման համակարգի անցկացման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարվել է մրցույթ: Մրցույթը կայացել է, կա հաղթող կազմակերպություն: Կառավարության որոշման նախագիծը արդեն իսկ շրջանառվում է և շուտով համապատասխան գումարի հատկացումը կլինի: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև Ալագյազ համայնքի համայնքային կենտրոնի արտաքին բարեկարգման աշխատանքները:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանին համակարգել և վերահսկել բոլոր նշված շինարարական աշխատանքների գործընթացը, ինչպես նաև կազմակերպել մարզային և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանության աշխատանքների վերահսկողությունը:

6. 2025թ. մարզում կատարված գյուղատնտեսական աշխատանքների ամփոփում */զեկուցող՝ գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Թ. Թովմասյան/*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց բուսաբուծության աջակցության 2025թ. ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ ծրագրի շահառու են 1098 քաղաքացի /5881,8հա/:

2025թ. ՀՀ Արագածոտնի մարզում տարերային աղետների պատճառով մայիս, հունիս ամիսներին կարկտահարվել են Թալին և Աշտարակ համայնքների հողատարածքները: Մարզպետի աշխատակազմում ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է պատճառված վնասները, կազմել համապասխան վնասի գնահատման ակտեր և ներկայացրել հանրապետական հանձնաժողով:

ՀՀ կառավարության հոկտեմբերի 9-ի որոշմամբ 2024 թվականի կարկուտից տուժած բնակիչներին նախատեսվում է փոխհատուցել 27 մլն ՀՀ դրամ, 2025 թվականի համար 198 մլն ՀՀ դրամ:

Խոշոր եղջերավոր կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքներ իրականացնելու համար 2025թ.-ին ՀՀ Արագածոտնի մարզում ծրագրի մասնակցության 1 հայտ է ներկայացվել: Կնքվել է պայմանագիր Ծաղկահովիտ համայնքում 378 գլուխ կենդանիների արհեստական սերմանվորման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Զեկուցվեց նաև, որ ՀՀ Արագածոտնի մարզում 2025թ.-ի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անհատույց մարզին տրամադրվել է 789,44լ «Շարպեյ», «Ցիպերմետրին» «Բրոմոցիդ- ֆլյուիդ» տեսակի թունանյութեր, որոնք բաշխվել են համայնքներին: Համայնքներում իրականացվել են մկնանման կրծողների և ծղրիդների դեմ պայքարի միջոցառումներ ընդհանուր 8518 հա վարակված հողատարածքներում:

Այլ հարցերի շրջանակում մարզպետը մեկ անգամ ևս կարևորեց մարզում իրականացվող բոլոր գյուղատնտեսական ծրագրերի վերաբերյալ իրազեկությունը և հանձնարարեց այդ նպատակով ակտիվ համագործակցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**